



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝
բնութագիր

Հոգեկան գործընթացների

Առարկան՝

Հայոց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝

Անահիտ Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝ Ուշիի Ն. Աղբալյանի անվան
միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եվ
գրականության ուսուցիչ

Երևան 2022

Քովանդակություն

Նախաբան -----	2 էջ
1. Հոգեկան գործընթացների բնութագիրը -----	4 էջ
1.1. Իմացական գործընթացները -----	5 էջ
1.2 Հուզականային գործընթացները -----	10 էջ
Եզրակացություն, առաջարկությունները -----	16 էջ
Օգտագործված գրականության ցանկը-----	17 էջ

Նախարան

Մարդուն և մարդկային գործողությունները հասկանալու և բացատրելու համար մենք դիմում ենք հոգեբանություն գիտությանը, որը մեզ կարող է տալ անհրաժեշտ գիտելիքներ: Մարդու հոգեկան գործընթացների մասին գիտելիքներն անհրաժեշտ են ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ մասնագիտական գործունեության համար, օրինակ՝ մանկավարժությանը: Հոգեբանությունը կայացման երկարատև ուղի է անցել, սակայն համեմատաբար կարճ պատմություն ունի: Հոգեկան երևույթները բացատրելու առաջին փորձերը դեռևս ձեռնարկվել էին Հին Հունաստանում, որտեղ հոգին դիտվում էր որպես շարժման ու զարգացման աղբյուր: Պլատոնը հոգեբանության մեջ դուալիզմի հիմնադիրն է: Պլատոնը նշում էր, որ հոգու մասնիկներն անհավասարաչափ են բաշխված մարդկանց շրջանում, և նրանցից մեկի գերակշռումը կարող է որոշիչ լինել անձի այս կամ այն խմբին պատկանելու հարցում: Օրինակ՝ սովորական աշխատավորների դեպքում գերակշռում է ստորին մասը՝ կիրքը, իսկ փիլիսոփաների դեպքում՝ գաղափարականը, բարձրագույն մասը: Շարունակելով Պլատոնին՝ նրա աշակերտը՝ Արիստոտելը, հեղինակել է «Հոգու մասին» տրակտատը, որն առաջին հոգեբանական աշխատությունն է հոգու մասին: Այս աշխատության մեջ Արիստոտելը տալիս է հոգու և մարմնի միասնության գաղափարը: Ըստ Արիստոտելի՝ գոյություն ունի հոգու 3 ձև՝ բուսական, կենդանական և մտածող: Ընդ որում, բուսականը ապահովում է աճը, կենդանականը՝ շարժումը, մտածողը՝ մարդու բանականությունը:

Դուալիզմը հաղթահարելու և մարդու իբրև միասնական ամբողջության մասին ուսմունք ստեղծելու քայլ կատարեց Սպինոզան: Նա ենթադրում էր, որ մարդն ունի երեք հիմնական շարժիչ ուժ՝ թախիծը, ուրախությունը, մղումը, որոնցից սկիզբ են առնում հուզական բազմազան վիճակներ:

19-րդ դարում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի և անատոմիայի զարգացումը նախադրյալ դարձավ հոգեբանության՝ որպես գիտության ձևավորման համար: Գիտական միտքը կենտրոնացվեց գլխուղեղի ուսումնասիրության և հոգեկան գործունեության մեջ Կենտրոնական Նյարդային Համակարգի ունեցած դերի վրա: Այս ընթացքում լույս տեսան բազում աշխատանքներ՝ նվիրված գլխուղեղում բազմաբնույթ ֆունկցիաների տեղայնացմանը (օրինակ՝ Փրիտչն ու Գիտցիզը բացահայտեցին շարժման և զգայունակության կենտրոնները, իսկ Բրոկան և Վերնիկեն՝ խոսքի մոտորային և վերբալ կենտրոնները):

Այսպիսով, հոգեբանությունն ուսումնասիրում է հոգեկանի ծագման ու զարգացման օրենքներն ու օրինաչափությունները: Մեկ այլ սահմանմամբ՝ հոգեբանությունը գիտություն է մարդու հոգեկանի ծագման և զարգացման վերաբերյալ: Հոգեկանի դրսևորումները խիստ բազմազան են, հանդես են գալիս միաձույլ և միաժամանակ: Այդ երևույթները լոկ քանակական գումար չեն, այլ միասնական հոգեկան գործունեություն են կամ նրա կողմնորոշման հիմքը:

Ուսումնական գործընթացի անքակտելի մաս է հանդիսանում հոգեբանությունը, անձի հոգեբանությունը, հոգեկան գործընթացները: Ուսումնական գործընթացում անձի

կողմից ջանքեր են կիրառվում ուսումնական նյութերը յուրացնելու համար, որին մասնակցում են անձի բարձրագույն հոգեկան գործընթացները:

Անձի հոգեկանը զարգանում է հասարակությաքն մեջ արժեքների յուրացմամբ և այն հանդիսանում է գլխուղեղի հատկություն, որի օգնությամբ մարդն արտացոլում է շրջապատող աշխարհը, առարկաներն ու երևույթները, գլխուղեղում ստեղծում դրանց պատկերները, որոնց միջոցով էլ կարգավորում է իր վարքն ու գործունեությունը: Անհնար է հերքել ուղեղի գործունեության և հոգեկանի միջև սերտ կապը:

Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բարձրագույն հոգեկան գործընթացները, տալ դրանց բնութագիրը :

1. Հոգեկան գործընթացների բնութագիրը

Մարդու հոգեկան գործընթացները, հասկություններն ու վիճակները, նրա հաղորդակցությունն ու գործունեությունը տարանջատվում և ուսումնասիրվում են առանձին, թեև իրականում դրանք սերտորեն կապված են միմյանց հետ և կազմում են մեկ ամբողջություն, որը կոչվում է մարդկային կյանք: Հոգեկանը մարդու ներաշխարհն է, որը ձևավորվում ու զարգանում է մարդու և արտաքին աշխարհի փոխազդեցության գործընթացում, այդ աշխարհը ճանաչելու, առարկաների և երևույթների կապերը բացահայտելու և վերափոխելու ժամանակ: Հոգեկան գործընթացները փոխկապակցված են, դրա վառ ասպնույցն է, օրինակ՝ ուսումնական գործընթացը, երբ աշակերտից պահանջվում է կիրառել հոգեկան բոլոր գործընթացները՝ ուսուցչի կողմից փոխանցվող տեղեկատվությունը ըմբռնելու համար :

Հոգեկան գործընթաց ասելով՝ հասկանում ենք օբյեկտիվ իրականության դինամիկ արտացոլումը հոգեկան երևույթների (մտածողության, ընկալման, հիշողության և այլն) ձևով: Արտացոլումը համարում ենք դինամիկ, որովհետև հոգեկան ցանկացած գործընթաց արտահայտում է շարժման վիճակ, զարգացման ընթացք և փոփոխություն դրա վրա ազդող պատճառների շնորհիվ: Հոգեկան գործընթացներն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝ 1. ճանաչողական (իմացական) և 2. հուզականային:

1.1. Իմացական գործընթացները

Իմացական կամ ճանաչողական խմբի մեջ մտնում են՝ **ճանաչողություն, ընկալումները, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը և խոսքը:**

Ճանաչողության պրոցեսում մարդը ձեռք է բերում գիտելիքներ, հասկացություններ իրական երևույթների մասին, գիտակցում իրեն շրջապատող աշխարհը: Կուտակած գիտելիքները մարդը օգտագործում է գործնականում, ցպահանջի :

Ճանաչողության մեջ կարևոր դեր են խաղում **զգայական, բանական ու ինտուիտիվ կարողությունները:**

Զգայական ճանաչողությունը իրականացվում է 6 զգայարանների միջոցով: Զգայությունները մարդուն ծանոթացնում են իրերի արտաքին տեսքի, ձևի, չափի հետ: Մարդը սկսում է տարբերել տաքը, սառը, գույները, հոտերը, փափկությունը և այլն: Զգայական ճանաչողությունն ունի երեք ձև՝ զգայություն, ընկալում և մտապատկեր:

Բանական ճանաչողությունը անվանվում է նաև ռացիոնալ: Այն գտնվում է ավելի բարձր մակարդակի վրա, և սպասվում է ավելի լուրջ գիտելիքներ: Այստեղ կարևորվում է վերացական և տրամաբանական կարողությունները: Բանականության միջոցով մարդը վերլուծում է իր զգայական պատկերները, որի միջոցով առանձնացնում է, օրինակ՝ տարբերություններ, նմանություններ և այլն: Բանական ճանաչողության երեք հիմնական ձևերն են՝ հասկացությունը, դատողությունը, եզրահանգումները:

Ինտուիցիայի միջոցով մարդը անմիջականորեն, առանց զգայական փորձերի թափանցում է հետազոտվող իրերի և երևույթների էության մեջ: Հայտնի է ինտուիցիայի երկու տեսակ՝ զգայական և ինտելեկտուալ:

Ընկալում

Ընկալումը (լատ.՝ perceptio՝ «պերցեպցիա»), մեծ մասամբ կախված է անհատի առանձնահատկություններից: Մեր գիտելիքները, հետաքրքրությունները, դիրքորոշումները, հուզականությունը ազդում են օբյեկտիվ իրականության ընկալման վրա: Քանի որ մարդիկ տարբերվում են իրենց անհատականությամբ, ուստի կարելի է ասել, որ գոյություն ունեն ընկալման անհատական տարբերություններ:

Գոյություն ունեն ընկալումների դասակարգման մի շարք մոտեցումներ. **շոշափական, հոտառության, տեսողական, լսողական, համի:**

Շոշափական ընկալում. շոշափելիքը մեծ նշանակություն ունի տարածության և շրջապատող առարկաների հատկությունների ընկալման գործընթացում: Ընկալման այս տեսակի հիմքում ընկած են հայման, ջերմության, ճնշման և կինեսթետիկ զգայությունները: Ընկալման այս հատուկ տեսակի օրգանը ձեռքն է, ընդ որում առաջնային, ակտիվ դերը պատկանում է բթամատին: Առանձնացվում է շոշափական շարժումների երկու տեսակ. մատների մանր շարժումներ, որոնք օգտագործվում են առարկայի առավել ինֆորմատիվ կետերի ուսումնասիրման համար և խոշոր շարժումներ, որոնք թույլ են տալիս միավորել առարկայի առանձին հատկանիշները և ստուգել դրանց վերաբերյալ պատկերացումները: Շոշափման միջոցով առարկաների ճանաչումը կոչվում է ստերեոգնոզիա:

Հոտառական ընկալում մեզ թույլ է տալիս զգալ և տարբերել տարբեր տեսակի հոտեր: Մարդու կողմից ընկալվող հոտերի քանակը բավական շատ է: Չնայած հոտառության նշանակությունը համեմատաբար ցածր է, բայց համի հետ միասին մեծ դեր ունի մարդու կյանքում. նույնիսկ հաճախ հանդես է գալիս որպես էսթետիկ հաճույքի աղբյուր:

Համի ընկալում բերանի ընկալիչների վրա ազդող գրգռիչների ընկալումն է համային զգայության հիման վրա: Համի ամբողջական պատկերը ձևավորվում է շոշափական, ջերմային, հոտառական ընկալիչների փոխազդեցության արդյունքում: Համի ընկալումը կապված է համային տարբեր խառնուրդների փոխներգործության հետ:

Տեսողական ընկալումը շրջապատող միջավայրի տեսանելի օբյեկտի պատկերի «կառուցման» գործընթացն է: Տեսողությունը այն համակարգն է, որը թույլ է տալիս միանգամից ընկալել առարկայի բարդ կառուցվածքը: Տեսողական ընկալման գործարկող օրգանը աչքն է:

Լսողական ընկալում տարբերվում է մյուսներից. եթե տեսողական և շոշափական ընկալումները արտացոլում են տարածության մեջ առկա առարկաները, ապա լսողական ընկալումը կապված է ժամանակի ընթացքի մեջ առկա գրգռիչների հաջորդականության հետ:

Ընկալումների մասին խոսելի անհրաժեշտ է նաև նշել, որ ըստ մատերիայի գոյության տարբերակում ենք ընկալման երեք ձևերը, դրանք են՝ **տարածության, ժամանակի և շարժման:**

Ժամանակի ընկալումը օբյեկտիվ ժամանակի ընթացքի արտացոլումն է մարդու հոգեկանում՝ շրջակա միջավայրի հետ փոխազդեցության արդյունքում:

Հիշողություն

Հիշողությունը իմացական գործընթաց է, որի նպատակն է կուտակել, պահպանել և վերարտադրել ձեռք բերված փորձը: Հիշողության գործընթացներն են մտապահումը, պահպանումը, վերարտադրումը և մոռացումը:

Հիշողությունը ըստ որակի լինում է **պատկերավոր, էյդետիզմ, իմպրիտինգ, ռեմինիսցենցիան, բառատրամաբանական, շարժողական, հուզական:** Վերջինս էլ իր հերթին ըստ գործունեության նպատակի լինում է՝ **կամային, ակամա**, ըստ տևողության՝ **կարճատև, երկարատև և օպերատիվ:**

Պատկերավոր հիշողությունը զգայական ինֆորմացիայի պահպանումն է, հիշողություն՝ պատկերացումների, կյանքի և բնության պատկերների, ինչպես նաև ձայների, հոտերի և համերի: Այն լինում է տեսողական, լսողական, շոշափելիքի, համային, հոտառության:

Էյդետիզմը (հին հունարեն՝ էյդոս-պատկեր, արտաքին տեսք) **հիշողության** հատուկ արտահայտչաձև է, հիմնականում դիտողական տպավորությունների, որոնք թույլ են տալիս պահպանել և վերարտադրել ընկալված առարկայի կամ երևույթի կենդանի պատկերը: Էյդետիկ հիշողությունը առարկայի վերարտադրումն է իր բոլոր մանրամասնություններով, որոնք տվյալ պահին չեն ներգործում տեսողական անայիզատորների վրա: Էյդետիկ պատկերները կարող են ամբողջանալ ընկալման այլ տեսակների (լսողական, տակտիլ, շարժողական, համային, հոտի և այլն) միջոցով: Էյդետիզմն այս կամ այն չափով բնորոշ է յուրաքանչյուրին, հատկապես մանկության, դեռահասության շրջանում:

Իմպրիտինգը տպավորվելու մեխանիզմ է, այսինքն հիշողության մեջ որոշակի ինֆորմացիայի ֆիքսում: Իմպրիտինգ երևույթը բացահայտել է և այդ տերմինը ներկայացրել գիտության մեջ Կոնրադ Լորենցը՝ ուսումնասիրելով մոխրագույն սագերին: Իմպրիտինգն իրականանում է կյանքի կոնկրետ փուլերում՝ մանկության և դեռահասության շրջաններում: Հիշողության մեջ ֆիքսվում են օբյեկտները և դրանց հատկանիշները: Այդ օբյեկտներն են՝ ծնողների, քույրերի, եղբայրների, թշնամիների կերպարները, ծննդավայրն իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Ռեմինիսցենցիան հիշողությունը գործընթաց է, որի ընթացքում ընկալված ինֆորմացիայի հետաձգված (2-3 օր անց կատարվող) վերարտադրվում է, որն ավելի լրիվ ու կատարյալ է լինում, քան մտապահման անմիջականորեն հետևող վերարտադրությունը: Խոսելով հիշողության հաջորդ տեսակի՝ **ռեմինիսցենցիան**, մասին, կարևորում ենք նշել նրան իրականացման պայմանների մասին, որոնք են՝

- 1) երբ մարդը վաղուց սովորել, մտապահել և գիտի համապատասխան նյութը,
- 2) երբ մարդն առաջին անգամ չէ, որ փորձում է վերհիշել նյութը,
- 3) երբ մարդու մոտ տվյալ նյութը հիշելու պահանջմունքը պահպանվում է:

Բառատրամաբանական հիշողությունը արտահայտվում է մարդկանց մտքերի մտապահման և վերարտադրման մեջ: Հիշողության այս տեսակի առանձնահատկությունն այն է, որ մտքերը լեզվից առանձին գոյություն չունեն, այստեղից էլ բխում է անվանումը՝ խոսքային-տրամաբանական:

Ճարժողական հիշողությունը տարբեր շարժումների և դրանց համակարգերի մտապահումը, պահպանումն ու վերարտադրումն է: Հիշողության այս տեսակի նշանակությունը կայանում է տարբեր գործնական հմտությունների ձեռքբերում, պահպանումը, օրինակ՝ քայլերը, գրելը և այլ հմտությունների: Սովորաբար շարժողական հիշողության չափանիշ է հանդիսանում մարդու ֆիզիկական ճկունությունը, աշխատանքում արագ կողմնորոշվելու կարողությունը:

Հուզական հիշողությունը կողմնորոշված է զգացմունքների վրա: Այլոց կարեկցելու կարողությունը կապված է հուզական հիշողության հետ:

Կարճատև հիշողությունը բնութագրվում է ընկալվող ինֆորմացիայի շատ կարճաժամկետ պահպանմամբ: Կարճատև հիշողության ծավալը յուրաքանչյուր մարդու համար անհատական է: Առանց կարճատև հիշողության անհնար է **երկարատև հիշողության** նորմալ ֆունկցիոնալությունը: Վերջինիս մեջ կարող է ներթափանցել և երկարատև ամրապնդվել միայն այն, ինչ երբևէ եղել է կարճատև հիշողության մեջ:

Մտածողություն

Մտածողությունն իմացական գործընթաց է, որի միջամտությամբ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայել երևույթների հական, օրինաչափ կապերն ու հատկանիշները: Մտածողություն բառը ծագում է հին անգլերեն *þoht* կամ *geþoht* բառերից, ինչպես նաև *þencan* «հասկանալ մտքում, հաշվի առնել» արտահայտությունից: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է: Մտածողությունը միջնորդված և ընհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքի հետ: Մտածողության հիմնական առանձնահատկություններն են՝

1. ինքնուրույնություն

2. ճկունություն

3. արագություն

4. լայնություն

Մարդը սկսում մտածել այն ժամանակ, երբ նրան անհրաժեշտ է որևէ հարց լուծել, որևէ խնդիր իրականացնել: Այսինքն մարդը անընդհատ չի մտածում: Մարդ լարում է ուղեղը, մտածում , երբ կա խնդրահարույց իրավիճակ:

Տարբերակվում են մտածողության երեք տեսակներ՝

1. ակնառու գործնական
2. ակնառու պատկերավոր
3. խոսքային տրամաբանական կամ վերացական

Ակնառու գործնական մտածողություն

Կիրառվում է մինչև երեք տարեկան երեխաների կողմից, օրինակ՝ երեխան կոտրում է խաղալիքը պարզելու համար թե՛ ինչ կա դրա մեջ:

Ակնառու պատկերավոր մտածողություն

Կիրառվում է երեքից բարձր մինչև յոթ տարեկան երեխաների կողմից, օրինակ՝ նրանք մտածում են, բայց չեն կարողանում դա կիրառել:

Խոսքային տրամաբանական մտածողություն

Մարդը ինչ որ մտածում է, կարողանում է իր մտածածի, պատկերացրածի, արտաբերել, իրականացնել խոսքի և լեզվի միջոցով:

Մտածողության զարգացման հիմնական տեսակները նախադպրոցական տարիքում անցումն է ակնառու-գործնական մտածողությունից ակնառու-պատկերավոր մտածողության, որը Ժ.Պիաժեն անվանում է ռեպրեզենտատիվ ինտելեկտին:

Երևակայություն

Երևակայություն մտավոր ճանաչողական գործընթաց է, որն ուղղված է նոր կերպարի, գաղափարի մոդելավորմանը: Երևակայությունը սերտորեն կապված է այլ գործընթացների հետ՝ հիշողություն, մտածողություն, խոսք և ուշադրություն:

Մարդու երևակայությունն օգնում է ստեղծագործող մարդկանց ստեղծել եզակի հեղինակային գործեր: Դրա էությունը որպես գործընթաց գոյություն ունեցողներից նոր պատկերներ կառուցելն է՝ եզակի և անկրկնելի:

Երևակայության տեսակները

Ժամանակակից հոգեբանական գիտության մեջ ընդունված է տարբերակել կամավոր (կանխամտածված) **երևակայությունը ակամա**: Երկրորդ դեպքում պրոցեսն ինքնին դրսևորվում է երազներում, որոնք մարդը տեսնում է: Այսինքն՝ օրվա ընթացքում

ապրած իրադարձություններն ու փորձառությունները վերածվում են անհատական պատկերների, որոնք մարդը շարունակում է «պտտել» երագում:

Կանխամտածված երևակայություն ակտիվանում է միայն մարդու կամքի մասնակցությամբ եւ ներառում է մի քանի ենթատեսակներ՝ **ռեկրեատիվ, ստեղծագործական, երագային**: Երևակայության վերստեղծում աշխատում է որոշակի առարկայի վերաբերյալ առկա պատկերացումների հիման վրա: Այսպիսով, գեղարվեստական գրականություն կարդալիս մենք անգիտակցաբար մեր գլխում կառուցում ենք վերացական նկարներ, լրացնում դրանք մեր սեփական պատկերացումներով, իմաստներով:

Ստեղծագործական երևակայության շնորհիվ ծնում է նոր արտադրանք, որն անպայման արտացոլում է իր ստեղծողի աշխարհի անհատական տեսլականը: Երևակայության հատուկ տեսակ է **երագել**. երևակայության այս տեսակը տարբերվում է նրանով, որ միշտ ստեղծում է ցանկալի պատկերը, արդյունքի վրա առանձնահատուկ ուշադրություն չկա, որպեսզի այն ստանա այստեղ և հիմա: Ձգտումը դեպի ապագան և ձևավորվող կերպարի անցողիկ լինելը երբեմն հանգեցնում են իրականությունից հեռանալու, երագների և երևակայությունների աշխարհում մնալուն:

Երևակայության գործառույթներ

Երևակայությունը որպես մտավոր ճանաչողական գործընթաց իրականացնում է օբյեկտիվ իրականության արտացոլման հիմնական խնդիրը: Մարդու ուղեղը կարողանում է ամբողջությամբ ընկալել տեղեկատվությունը միայն այն դեպքում, երբ այն իսկապես հետաքրքիր է իրեն: Հիմնական գործառույթների շարքում ընդունված է առանձնացնել հետևյալը.

Նպատակի սահմանում և պլանավորում.

Ցանկացած գործի անցնելուց առաջ մարդը պետք է պատկերացնի դրա վերջնական արդյունքը: Որոշ դեպքերում ձեռնարկության հաջողությունը կախված է քայլերի հաջորդականությունը կանխատեսելու և կառուցելու կարողությունից: Երևակայությունն այստեղ հանդես է գալիս որպես կապող օղակ ցանկալի նպատակի և գործունեության վերջնական արդյունքի միջև: Տվյալ դեպքում կոնկրետ է, ֆանտազիաների հետ կապ չունի: Երագը կարող է մարդուն տանել դեպի նոր ձեռքբերումներ, բայց միայն այն դեպքում, եթե նա պատրաստ է գործել, գործնական քայլեր ձեռնարկել ցանկալի ուղղությամբ:

ճանաչողական ֆունկցիա.

Առանց անձի վրա մշտական աշխատանքի հնարավոր չէ որևէ գործունեություն: Ինչով էլ մարդ զբաղված է, զարգացման համար նրան միշտ անհրաժեշտ է արդյունավետ գործունեություն: Նոր բաներ սովորելու, նրանց հմտություններն ու կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը հանգեցնում է ճանաչողական գործունեության ակտիվացման գործընթացին:

հարմարվողական գործառույթ.

Այս գործառույթը բաղկացած է անհասկանալի երևույթներն ինքն իրեն բացատրելու անհրաժեշտությունից: Հին ժամանակներում մարդիկ լեգենդներ և հեքիաթներ էին ստեղծում՝ օգտագործելով իրենց երևակայությունը՝ նվազագույնի հասցնելու սեփական վախը անհայտի հանդեպ:

հոգեթերապևտիկ գործառույթ

Երևակայությունը մարդու կողմից կարող է հաջողությամբ օգտագործվել որպես հոգեբանական պաշտպանություն, երբ նա «հորինում» է գոյություն չունեցող իրողություններ այնպես, որ դրանք համապատասխանեն շրջապատող աշխարհն ընկալելու, նրա ներքին պատրաստակամությանը:

Խոսքը

Խոսքը հաղորդակցման գործընթացում լեզվի գործածումն է՝ մտքերը, կամքը, զգացմունքերը փոխանցելու նպատակով: Ի տարբերություն կենդանիների հնչունային ազդանշանային համակարգի՝ խոսքի բովանդակությունը ներքին վիճակի արտահայտումը չէ, այլ վերջինիս իմաստավորումը: Խոսքն ունի հիմնական 2 ֆունկցիաներ՝ **1. սիգնիֆիկատիվ** և **2 հաղորդակցում**:

Սիգնիֆիկատիվ (լատ. signum-նշան) ֆունկցիան. մարդկանց միջև շփումը հնարավոր է դառնում, երբ բոլորն օգտագործում են միևնույն խոսքային նշանները և նույն իմաստն են դնում օգտագործած բառերի մեջ: Առարկաները, երևույթները նշանակություն են ստանում՝ արտահայտվելով բառերի միջոցով:

Հաղորդակցման ֆունկցիային կարևոր նպատակներն են

- 1) տեղեկատվությունը,
- 2) արտահայտչականությունը,
- 3) գործողության մղումը:

Խոսքը կարող է լինել **արտաքին և ներքին**:

Արտաքին խոսքը էքստերիորգացված խոսքն է, որի հիմնական ֆունկցիան հաղորդակցումն է: Արտաքին խոսքն իր հերթին լինում է **գրավոր և բանավոր**, ինչպես նաև կարող է արտահայտվել **մենախոսությամբ և երկխոսությամբ**:

Ներքին խոսքը ինտերիորիզացված (ներքնայնացված) խոսքն է, որի հիմնական ֆունկցիան կարգավորումն է, որն իրականանում է խորհելու, գործողությունները պլանավորելու, ինքն իր հետ երկխոսության, երևակայական գրուցակցի /գրուցակիցների/ հետ գրույցի միջոցով:

Անձի խոսքային հատկանիշներն են շփվողականությունը, շատախոսությունը, ինքնամփոփությունը, ճարտասանությունը, սեղմությունը:

1.2. Հուզականային գործընթացներ

Հոգեկան գործընթացների 2-րդ ենթախումբը հուզականային գործընթացներն են, որի մեջ են մտնում զգացմունքները և կամքը:

Մեր կյանքում մեծ նշանակություն ունեն **հույզերը**:

Իրականության ճանաչումը չի սահմանափակվում լոկ երևույթների և առարկաների արտաքին հատկությունների ընկալմամբ, նրանց ներքին և թաքնված կապերի ու հատկությունների բացատրմամբ, դրանց մտապահմամբ ու հետագա վերարտադրմամբ: Այդ պրոցեսի հաջորդ փուլի իմաստն ու նպատակն այն է, որ այդ ամենի հանդեպ ցուցաբերվում է սուբյեկտիվ վերաբերմունք: Հոգեկան այդ պրոցեսը, որն արտահայտում է մարդու սուբյեկտիվ վերաբերմունքը իրականության և սեփական «ես»-ի հանդեպ, կոչվում է հույզ (եմոցիա): Հույզերն այն հանելի կամ տհաճ զգացումներն են, որ առաջանում են յուրաքանչյուրիս մոտ շրջակա միջավայրը ճանաչելու, ինքնաճանաչելու, որևէ գործունեություն ծավալելու, միջանձնային կապեր կամ հարաբերություններ հաստատելու ընթացքում կամ արդյունքում:

Հույզերի կենսաբանական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալական իմաստը դրանց՝ օրգանիզմի վրա մոբիլիզացնող և կազմակերպող (կազմավորող) ազդեցության մեջ է, որի նպատակը միջավայրում հարմարվելն է: Ընդունված է տարբերակել **բուն հույզեր** (հույզեր՝ բառի նեղ իմաստով) և **զգացմունքներ**: Առաջիններն արտահայտում են անձի սուբյեկտիվ ապրումները, որոնք պայմանավորված են բնագոյային հակումների և պահանջների բավարարմամբ, այսինքն՝ սննդի, ջրի, սեռական հակումների, ինքնապաշտպանման բնագոյի պահանջներով պայմանավորված:

Չզգացմունքները պայմանավորված են այն պահանջներով, որոնք առաջանում են մարդու զարգացման ընթացքում և պայմանավորված են միջանձնային հարաբերություններով ու շփումներով: Ամփոփելով՝ սրանք «մարդկայնացված» հույզերն են: Այս շարքին են դասվում **բարոյաէթիկական, էսթետիկական և ինտելեկտուալ հակումները**՝ սերը, հարգանքը, պատիվը, բարեկամությունը, կարեկցանքը, համակրանքը և այլն: Չզգացմունքները որոշիչ ազդեցություն ունեն հույզերի և մարդու վարքի վրա ամբողջությամբ: Մարդու հիմնարար հույզերից են հուզմունքը, ուրախությունը, զարմանքը, վիշտը, գայրույթը, զզվանքը, արհամարանքը, վախը, ամոթը և մեղքը: Մնացած հույզերը բխում են այդ տասը ձևերից:

Հույզերը բնութագրվում են մի շարք հատկություններով՝ **որակ, բովանդակություն, ուղղվածություն, տևողություն արտահայտվածություն, կայունություն**: Այս հատկությունների հիման վրա հույզերը բաժանվում են հետևյալ ձևերի՝

տրամադրությունը տևական, կայուն և հավասարակշռված հուզական վիճակ է, որը երանգավորում է մարդու առանձին հոգեկան պրոցեսներն ու վարքը:

Կիրքը տևական, ընդգծված, կայուն հուզական վիճակ է, որն ուղղված է և կենտրոնացած որևէ օբյեկտի կամ գործունեության վրա:

Աֆեկտը կարճատև արտահայտված ոչ կայուն հուզական վիճակ է, որն ամբողջովին և արագ կլանում է մարդուն: Այն արտահայտվում է գայրույթով, հիացմունքով, հիասթափությամբ, ահով:

Մարդու հուզականությունը կարող է դրսևորվել **հուզական վիճակներով և հուզական հակազդումներով**:

Հուզական վիճակը, ունենալով սոմատիկ և հոգեկան դրսևորումներ, միջանկյալ տեղ է գրավում դրանց միջև:

Հուզական հակազդումը որևէ ազդեցության վրա առաջացող անմիջական սուբյեկտիվ պատասխանն է:

Իրենց սուբյեկտիվ երանգավորմամբ, հույզերն ու զգացմունքները լինում են՝

Դրական (հաճելի) - հույզերի ու զգացմունքների սուբյեկտիվ երանգավորմամբ տարատեսակ:

Բացասական (տհաճ) - հույզերի ու զգացմունքների սուբյեկտիվ երանգավորմամբ տարատեսակ:

Կամք

Մեփական գործողությունները գիտակցորեն կազմակերպելու ու կարգավորելու և այդ ճանապարհով դրված նպատակին հասնելու ընդունակությունն անվանում են կամք Այն կարելի է սահմանել նաեվ որպես մարդու գիտակցված, նպատակասլաց, պատճառաբանված ու ակտիվ հոգեկան գործունեություն, որն ուղղված է խոչընդոտների հաղթահարմանը:

Արգելքներ, խոչընդոտներ հաղթահարելը պահանջում է ջանք՝ նյարդահոգեկան լարվածության յուրահատուկ մի վիճակ, որը կենտրոնացնում է մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական ուժերը: Մարդու կամքն արտահայտվում է նրանով, թե նա որքանով է ունակ հաղթահարելու նպատակի ճանապարհին ընկած արգելքներն ու դժվարությունները:

Կամքի խանգարումը արտահայտվում է կամային կենտրոնների խաթարմամբ, ինչը կարող է հանգեցնել կամքի թուլացման կամ կամքի բացարձակ կորստի (աբուլիա): Կամային կենտրոնների գործունեության խաթարման արդյունքում կարող է առաջանալ նաև կամային դրդիչների ծայրահեղ լարվածություն (հիպերբուլիա), ինչի հետևանքով կամային հակազդեցությունները դառնում են չափազանց արագ ու անզուսպ, օրինակ՝ աֆեկտի ժամանակ կատարված գործողությունները:

Կամքի գլխավոր գործառույթը կենսագործունեության դժվարին պայմաններում ակտիվությունը կարգավորելն է: Կարգավորման հիմքում գրգռման և արգելակման պրոցեսների փոխազդեցությունն է: Մարդու գործողությունները բխում են որոշակի դրդապատճառներից և ուղղված են որոշակի նպատակի: Դրդապատճառն այն է, ինչը մարդուն մղում է գործունեության, իսկ նպատակը՝ ինչին մարդը ձգտում է այդ գործունեության ընթացքում: Մարդուն գործունեության մղող ելքային ուժը պահանջմունքն է, այսինքն՝ ինչ-որ բանի հանդեպ կարիքը: Պահանջմունքները այն նախադրյալներն են, որոնց հիման վրա ձևավորվում են մարդ գործունեության

դրդապատճառները: Պահանջմունքներն առաջ են բերում դրանք բավարարելու ձգտում, որն էլ արտահայտվում է հակումներով կամ ցանկություններով:

Հակումը չգիտակցված, մշուշոտ ձգտում է, որն ուղղված չէ դեպի որոշակի օբյեկտ և չի ուղեկցվում նպատակի պարզորոշ պատկերացմամբ: Հակումները ծագում են բնագոյների ոլորտից (սնվելու, պաշտպանական, սեռական և այլն): **Բնագոյները** բնածին բարդ գործողություններ են, որոնց շնորհիվ բավարարվում են պահանջմունքները: Երբ հակումները թափանցում են գիտակցության մեջ և պարզ են դառնում դրանց բավարարման ուղիները, կոչվում են **ցանկություններ**: Անորոշ հակումների վերածվելը գիտակցված ցանկությունների անհրաժեշտ պայման է գիտակցական և նպատակասլաց գործունեության համար, որում էլ դրսևորվում է մարդու կամքը:

Այսպիսով, կամքը մարդու կողմից իր վարքի և գործունեության գիտակցական կարգավորումն է, որն արտահայտվում է նպատակասլաց գործողությունների կատարման ժամանակ, ներքին և արտաքին դժվարությունները հաղթահարելու կարողության միջոցով:

Կամքի ձևավորումը երկարատև գործընթաց է: Դեռ վաղ մանկությունից մարդու մեջ ամենից առաջ ձևավորվում են ամենապարզ ընդունակությունները, որոնք, անհատի զարգացմանը զուգընթաց, բարդանում են: Արդեն ձեռք բերված ընդունակությունները մարդու գործողությունները դարձնում են ավելի գիտակցված: Դրանք արդեն կամային գործողություններ են: Մարդու անհատական զարգացման գործընթացում (օնտոգենեզ) կամային գործողությունները բարդանում և կատարելագործվում են:

Բոլոր բարդ կամային գործողություններն անցնում են սկզբնական, պարզագույն գործողությունների փուլով: Ամեն մի գործունեության և առավել ևս կամային գործունեության համար անհրաժեշտ պայման է ուշադրության առկայությունն ու մասնակցությունը:

Կամային գործողությունները մեկը մյուսից տարբերվում են առաջին հերթին դրանց բարդության աստիճանով: Գոյություն ունեն բարդ կամային գործողություններ, որոնք ներառում են մի շարք ավելի պարզ կամային գործողություններ:

Բարդ կամային գործունեության փուլերն են՝

1. նպատակի գիտակցում և դրան հասնելու ձգտում,
2. նպատակին հասնելու մի շարք հնարավորությունների գիտակցում,
3. այդ հնարավորությունների հաստատման կամ մերժման դրդապատճառների ի հայտ գալը,
4. դրդապատճառների պայքար և ընտրություն,
5. մեկ հնարավորության ընտրությունը՝ որպես լուծում,
6. ընդունված լուծման իրականացում,
7. արտաքին արգելքների հաղթահարում և նպատակի իրականացում:

Կամային գործողության համար անհրաժեշտ է գիտակցել նպատակի դժվարությունը: Բացի դժվարության աստիճանից, կամային գործողությունները տարբերում ենք նաև գիտակցվածության մակարդակով:

Կամքը կապված է մտածողության և զգացմունքների հետ: Կան դեպքեր, երբ մարդը գիտակցում է, թե ինչ է անում, սակայն չի կարող բացատրել, թե ինչի համար է անում: Առավել հաճախ պատահում են դեպքեր, երբ մարդը ամբողջովին տարված է ինչ-որ ուժեղ զգացմունքով: Նման գործողություններն ընդունված է անվանել **իմպուլսիվ**: Դրանց գիտակցման մակարդակը ցածր է: Իմպուլսիվ արարքներից հետո մարդ հակված է զղջալու իր արարքների համար, իսկ կամքը գերծ է պահում չմտածված գործողություններ կատարելուց:

Կամային ոլորտի խանգարումներ

Կամային գործընթացն ընթանում է երեք փուլով՝

1. հակումների, մոտիվացիոն մակարդակ,
2. նպատակադրման, ինտելեկտուալ մակարդակ,
3. նպատակն իրականացնելու մակարդակ:

Այս ոլորտի խանգարումները կարող են ի հայտ գալ նշված յուրաքանչյուր մակարդակում:

1. Հակումների, մոտիվացիոն մակարդակի խանգարումներն են.

- Հակումների ճնշվածություն (արգելակում). ներառում է հիպոբուլիան, անոռեքսիան, սեռական մղման նվազումը և պասիվ պաշպանական հակազդում:

Հիպոբուլիան գործունեություն իրականացնելու մղման թուլացումն է, երբ անձը պասիվ է, ոչնչով չի զբաղվում, երկար ժամանակ մնում է նույն դիրքում: Սրա արտահայտված ձևը արբուլիան է (կամազրկություն), բնորոշվում է անգործությամբ և անտարբերությամբ:

Անոռեքսիան սնվելու բնագրի թուլացումը կամ ախորժակի կորուստն է: Կերակուրից հրաժարվելով՝ հիվանդները սովորաբար հյուծվում են, որոշ դեպքերում էլ մահանում:

Սեռական մղման նվազումը սեռական ցանկության, բնագրի թուլացումն է կամ արգելակումը, տղամարդկանց դեպքում այն կոչվում է իմպոտենցիա, կանանց դեպքում՝ ֆրիգիդություն:

Հիպերբուլիան գործունեություն իրականացնելու բնագրի հիվանդագին ակտիվացումը և ուժեղացումն է, հիվանդները միաժամանակ տարբեր գործունեություն են ծավալում, ուշադրությունը լինում է անկայուն, ուստի աշխատանքի արդյունավետությունը նվազում է:

Բուլիմիան (շատակերություն) սնունդ ընդունելու բնագրի ուժեղացումն է, որի դեպքում մարդը չի կարողանում կառավարել իր ախորժակը, դիտվում է շատակերություն:

Անընդհատ ունենալով սովի զգացում՝ ծայրահեղ շատ ուտում են, այնուհետև կարող են փսխումներ լինել, ապա նորից սով զգալ և այլն:

Հիպերսեքուլալության դեպքում սեռական բնագրի կտրուկ ուժեղացում է դիտվում, անձը չի կարողանում զսպել, ազատվել այդ ցանկությունից, այն դառնում է գերիշխող, եվ ազդում է անձի ողջ վարքի վրա:

Կամային ճնշվածություն այն ներառում է. Հիպոկինեզիան շարժումների դանդաղումը և արգելակումն է, ծայրահեղ ձևը ակինեզիան է, որը հանդիպում է ստուպորի, դեպրեսիայի դեպքում:

Հիպոմիմիան դեմքի արտահայտչականության նվազումն է, դեմքը դառնում է անշարժ, անկենդան:

Մուտիզմը խոսքի արգելակումն է:

Եզրակացություն և առաջարկություններ

Ամփոփելով՝ կարող ենք վստահորեն ասել, որ մարդու հոգեկան գործընթացների առանձնահատկությունների իմացությունը շատ կարևոր է ինչպես առօրյա կյանքում, աշխատանքում, այնպես էլ ուսումնական գործընթացում, և՛ ծնողների, և՛ մանկավարժների համար:

Մեր աշխատանքում դիտարկվեց մարդու հոգեկան գործունեության տեսակները. մտածողության, ընկալման, հիշողության, խոսքի, երևակայության առանձնահատկությունները կհուշեն, թե ինչպես զարգացնել և կատարելագործել ճանաչողական գործունեության համար կարևոր որոշակի գործընթացներ: Այն կարող է նաև օգնել հաղթահարել հաղորդակցման դժվարությունները:

Ցանկանում ենք նշել երեխայի հուզականային ոլորտի զարգացման անհրաժեշտությունը՝ հատկապես կամքի ուժի ձևավորմանը նպաստելու անհրաժեշտությունը:

Հոգեկան գործընթացները հիմքն են, որը որոշում է անձի հոգեբանական հատկությունները, որոնք իրենց հերթին արտահայտվում են անձի ունակություններով, խառնվածքով, կողմնորոշմամբ, նրա բնավորությամբ:

Հոգեկան գործընթացների յուրաքանչյուր տեսակ ունի իր ենթատեսակները, օրինակ՝ հիշողությունը: Եվ այս բոլոր ենթատեսակները կարևոր դեր են խաղում մարդու մտավոր գործունեության ընթացքում: Նաև վստահաբար կարող ենք ասել, որ մտավոր գործունեության մեկ տեսակը (օրինակ՝ խոսք) կատարելիս մարդը մասնակցում է մտավոր գործունեության բոլոր տեսակներին: Ինչ-որ բան ասելու համար մարդ պետք է մտածի, մտքեր ձևակերպի, հիշի և իր երևակայության մեջ «մշակի»:

Մարդու համար հոգեկան հատկությունները որոշիչ դեր են խաղում ուսման գործընթացում, հորբիների, մասնագիտության ընտրության հարցում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է իմանալ անձի բնավորության հիմնական հոգեբանական գծերը: Այս գիտելիքը կարող է մանկավարժների աջակցել երեխաների հետ աշխատելիս, հատկապես՝ դեռահասների հետ:

Այսպիսով, առանց հոգեկան գործընթացների մասնակցության, մարդու գործունեությունը անհնար է: Նրանք հանդես են գալիս որպես անձի անբաժան ներքին գործոններ:

Առաջարկություններ

Պայմանավորված խնդիրներով, որոնք առաջանում են ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, ծնող –աշակերտ, ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններում՝ պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակման նպատակով հանդիպումներ մանկավարժների, ծնողների, աշակերտների համար հոգեբանների հետ, որի ընթացքում մասնակիցները կկարողանան քննարկել դժվարությունները, որոնց հանդիպում են ուսուցման պրոցեսում (օրինակ՝ դժվարություններ, որոնք պայմանավորված են աշակերտի

հիշողության ֆունկցիայի զարգացման անհրաժեշտությամբ, ծնողավարության բացթողումների հետ և այլն):

Դեռահասների հետ աշխատանքներում ներգրավվել հոգեբաններին, ովքեր կարող են նրանց տրամադրել անհրաժեշտ աջակցությունը, որը կնպաստի ուսումնական գործընթացում դժվարությունների հաղթահարմանը:

Ուսուցիչներին առաջարկում ենք իրենց աշխատանքներում ներառել այնպիսի գործնական առաջադրանքներ, որոնք կարող են նպաստել աշակերտների իմացական ոլորտի զարգացմանը, օրինակ՝ դատողության:

Օգտագործված գրականության ցանկը

1. Ռոբերտս Ա. (2012): Ամբողջական մարդու օրգանիզմ: «Տեխնոմարկետ դիզայն», Երևան:
2. Սերգեյ Արզումանյան «Հոգեբանություն»
3. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ
Ծ ռ ա գ ի ռ Որակավորման մասնագիտական քննության հոգեբանության տեսություն և
պատմություն – ԺԹ.00.01 առարկայի
4. Психологический словарь /под ред. В. Е. Давыдова, А. В. Запорожца, Б. Ф. Ломова и др./ . М., 1983. 448 с.
5. Психологический словарь /под ред. П. И. Питкасистоого/. М., 1988. 544 с
6. Романова В. Я. Психология памяти. М., 2000. 440 с.
7. Степанов, В. Е., Психология / В. Е. Степанов, В. П. Ступницкий. - М.: Дашков и К, 2004.

Հղումներ

1. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D5%B4%D6%84>
2. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>
3. <https://www.youtube.com/watch?v=zjGTRfrHgcw>